



*Շրջակա միջավայրի նախարարության  
«Հիդրոոդերոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

---

*ԱԳՐՈՂԵՐՆՈՒԹՅԱՆ ԱԿՏՆԵՐ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2024*

---


*Մայիսի առաջին տասնօրյակ*

*Տեղեկագիրը կազմել է ագրոոդերոլոգիայի և մոնիթորինգի կենտրոնի ղեկավարը՝ մասնագիտացված ագրոոդերոլոգիայի կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան*

## ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Մայիսի առաջին փասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է նորմայի սահմաններում, Արարատյան դաշտում՝ նորմայից բարձր մինչև 1-1,5աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են մայիսի 1-ին. Տավուշում գրանցվել է +23...+28°C (Դիլիջան՝ +22°C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +19...+21°C, նախալեռնային շրջաններում՝ +27...+29°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +27...+29°C, նախալեռնային շրջաններում՝ +20...+22°C, Շիրակում՝ +19...+24°C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +18...+22°C, նախալեռնային շրջաններում՝ +24...+26°C, Գեղարքունիքում՝ +15...+20°C, Լոռիում՝ +19...+23°C, Արմավիրում, Արարատում՝ +28...+30°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +18...+20°C, նախալեռներում՝ +23...+26°C (Աշտարակ՝ +30°C):

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են մայիսի 9-ին, երբ առանձին մարզերի 2000մ-ից բարձր հատվածներում գրանցվեցին բացասական ջերմաստիճաններ: Տավուշում գրանցվել է +4...+9°C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 0...-2°C, նախալեռնային շրջաններում՝ +7...+9°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +8...+11°C, նախալեռնային շրջաններում՝ +3...+5°C, Շիրակում՝ -1...+2°C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ -1...+3°C, նախալեռնային շրջաններում՝ +4...+6°C, Գեղարքունիքում՝ 0...+3°C, Լոռիում՝ +3...+7°C (Տաշիր՝ +1°C), Արմավիրում, Արարատում՝ +7...+10°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 0...-2°C, նախալեռներում՝ +5...+7°C:


## Տասնօրյակային տեղումներ



Մայիսի 3-10-ին հանրապետության շրջանների զգալի մասում դիտվել է անձրև և ամպրոպ, առանձին հատվածներում կարկուտ:

Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 79-112մմ (192-353%), Լոռիում՝ 70-95մմ (221-325%), Տավուշում՝ 47-73մմ (152-219%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 72-112մմ (224-344%), նախալեռներում՝ 53-94մմ (208-314%), Գեղարքունիքում՝ 35-68մմ (163-184%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 85-93մմ (229-250%), նախալեռներում՝ 74մմ (305%), Արարատում՝ 12-40մմ (86-194%), Արմավիրում՝ 30-45մմ (170-206%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 62մմ (190%), նախալեռներում՝ 57մմ (319%), Սյունիքի նախալեռնային շրջաններում՝ 26-34մմ (72-132%), հովտային շրջաններում՝ 26-27մմ (95-168%):


## Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են մայիսի 9-10-ն ընկած ժամանակահատվածում. լեռնային շրջաններում՝ 0...-3°C, Լոռու և Սյունիքի նախալեռնային շրջաններում՝ +2...+7°C Արարատյան դաշտում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ +7...+9°C:

**Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ**


**Արարատ**




**Արմավիր**




**Կոտայք**



**Գեղարքունիք**




**Տավուշ**




**Էրևան**




**Վայոց ձոր**



**Մյանիք**



**Շիրակ**



**Արագածոտն**



## Հացահատիկային մշակաբույսեր

Առանձին հովտային շրջաններում աշնանացան ցորենը ծաղկել է, նախալեռնային շրջաններում շարունակվել, իսկ լեռնային շրջաններում սկսվել է աշնանացանի ծեղացողունի ներքին հանգույցների առաջացումը: Լեռնային շրջաններում առաջացել են գարնանացան ցորենի և գարու երրորդ տերևները:

Նախալեռնային շրջաններում առաջացել են եգիպտացորենի ծիլերը:

Հովտային շրջաններում աշնանացանի բարձրությունը տասնորյակի վերջում հասել է 70սմ-ի, լեռնային շրջաններում՝ 33սմ, տասնորյակային աճը կազմել է 10-13սմ:

Մերձավանում աշնանացան ցորենի դաշտում բույսի աճի և զարգացման համար անհրաժեշտ հողի խոնավության պաշարները 0-10սմ շերտում՝ 18մմ, 0-20սմ շերտում՝ 41մմ, 0-30սմ՝ 71մմ, որն անցյալ տասնորյակի համեմատ բարձրացրել են 10-20մմ-ով:



## Պտղաբույսեր, խաղող

Հովտային և նախալեռնային շրջաններում շարունակվել է կորիզավոր պտղաբույսերի աճն ու զարգացումը:

Հովտային և նախալեռնային շրջաններում շարունակվել է խաղողի վազի ծաղկաբույլերի առաջացումը:

Լեռնային շրջաններում հնդավորների ծաղկումն ավարտվել է:

## **Կարտոֆիլ և խոտաբույսեր**

Լեռնային շրջաններում շարունակվել է կորնգանի, հովտային շրջաններում՝ առվույտի ցողունի աճը: Մերձավանում բույսի բարձրությունը տասնորյակի վերջում կազմել է 68սմ-ի, տասնորյակային աճը կազմել է 13սմ:

Նախալեռնային շրջաններում շարունակվել է կարտոֆիլի ծիլերի առաջացումը, լեռնային շրջաններում՝ կարտոֆիլի ցանքը:

